ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԵՐԵՎԱՆՈՒՄ. ՆՎԻՐՎԱԾ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 75-ԱՄՅԱԿԻՆ

1990 թ. ապրիլի 17—20-ը ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայում տեղի ունեցավ «Հայերի ցեղասպանություն. պատմություն, տեսություն, քաղաքական պատասխանատվություն» թեմայով միջազգային գիտաժողով։ Գիտաժողովի բացումը համընկավ ՀԽՍՀ ԳԱ ընդհանուր ժողովի հետ։

Միացյալ նիստը ներածական խոսքով բացեց ՀԽՍՀ ԳԱ պրեզիդենտ Վ. Հ. Համբարձումյանը։ Նա մասնավորապես նշեց, որ Մեծ Եղեռնը ծրագրըված ոճրագործություն էր Թուրքիայում հայերին լրիվ ոչնչացնելու, նրանց անկախացման ձգտումներին վերջ տալու և դրանով Առաջավոր Ասիայում Ռուսաստանի ազդեցության տարածմանը դիմադրավելու նպատակով։ Թուրքիայում վարվող հակահայկական քաղաքականությունը ժառանգեցին նաև քեմալականները, որոնց ձեռքերով վերացվեցին հայության վերջին բեկորները Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում, կազմակերպվեցին հայկական կոտորածներ Արևելյան Հայաստանում։

Վ. Հ. Համբարձումյանը գիտաժողովի կարևոր նպատակը համարեց Մեծ Եղեռնի վերաբերյալ պատմագիտական ուսումնասիրությունների արդյունքների ամփոփումը, ցեղասպանությունը ժխտելու, թաքցնելու կամ արդարացնելու քաղաքականության դեմ միջոցների մշակումը, որպեսզի առհավետ կանխվի ցեղասպանությունը մարդկության կյանքում։

Այնուհետև «Հայ ժողովրդի մեծ ողբերգությունը» թեմայով զեկուցմամբ հանդես եկավ ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանը։ Նա հատկապես նշեց այն հանգամանքը, որ երիտթուրքերը ձգտում էին զանգվածային ջարդերի միջոցով իրենց հաշիվները մաքրել կայսրության ոչ թուրք ազգերի ու ազգությունների (հայերի, հույների, արաբների, քրդերի, ասորիների և այլն) հետ, որոնք դիտվում էին որպես լուրջ խոչընդոտներ պանթուրքիստական նպատակների ու ծրագրերի իրականացման համար։ Թուրք շովինիստների առաջին հարվածն ուղղվեց հայերի դեմ, որպեսզի վերջ դրվի Հայկական հարցին և ճանապարհ հարթվի Կովկասի գրավման համար։

Զեկուցողը կանգ առավ մի շարք փաստաթղթերի վրա, որոնք անհերքելիորեն հաստատում են հայերի զանգվածային կոտորածները։ Այսպես, օրինակ, Կ. Պոլսում գերմանական դեսպան, համոզված թուրքոֆիլ բարոն Ֆոն Վանգենհայմը իր գաղտնի զեկուցագրում, ուղղված Գերմանիայի կանցլեր Բեթման Հոլվեգին, 1915 թ. հունիսի 17-ին հաղորդում էր. «Միանգամայն ակնհայտ է, որ հայերին աքսորելը կապված չէ միայն ռազմական նկատառումների հետ։ Վերջերս ներքին գործերի մինիստր Թալեաթ բեյը առանց քաշվելու հայտարարել է կայզերական դեսպանության աշխատակից դոկտոր Մորդմանին, որ «Բարձրագույն Դուռը ձգտում է օգտագործել համաշխարհային պատերազմը, որպեսզի վերջնական դատաստան տեսնի իր ներքին թըշնամիների (տեղական քրիստոնյաների) հետ, առանց հարուցելու դիվանագիտական միջամտություն արտասահմանից»։ 1915 թ. հուլիսի 7-ին նույն դեսպանը գրում էր կանցլերին. «Այդ գործողությունները (իմա՝ հայերի բռնագաղթը) և այն ձևերը, որոնց միջոցով կատարվում են դրանք, վկայում են այն մասին, որ կառավարությունը իրոք նպատակ ունի ոչնչացնել հայ ցեղը թուրքական պետության մեջ»։ Գերմանական հաջորդ դեսպան կոմս Վոլֆ Մետերնիխի գաղտնի զեկուցագրերից մեկում, 1916 թ. հունիսի 30-ին հաղորդվում էր, որ երիտթուրքերի կուսակցության կենտրոնական կոմիտեն «պահանջում է բնաջինջ անել հայերի վերջին մնացորդները»։

Զեկուցողը կանգ առավ 1915—1916 թթ. արևմտահայության ինքնապաշտպանական կռիվների և մասնավորապես Վանի հերոսական ինքնապաշտպանության վրա, շոշափեց Հայկական հարցի հետ կապված ժամանակակից մի շարք խնդիրներ։

Այնուհետև «Հայերի ցեղասպանության ուսումնասիրությունը. պատմական մոտեցում» թեմայով զեկուցմամբ հանդես եկավ ՀԽՍՀ ԳԱ արտասահմանյան անդամ Ռիչարդ Հովհաննիսյանը (ԱՄՆ)։ Հեղինակը զեկուցման մեջ մանրամասն կանգ առավ հայոց ցեղասպանության պատմության փուլերի վրա, սկսած 1890-ական թթ. մինչև մեր օրերը։

Դեռ 1915 թ. Թուրքիան ժխտում էր հայերի տեղահանությունն ու կոտորածները, կատարվածի համար մեղադրում էր հայերին, որ իբր թուրքերը միայն պաշտպանվել են հայերի անհնազանդությունից։ Երիտթուրքերի տապալումից հետո Ստամբուլի թուրքական նոր կառավարությունը ընդունեց ցեղասպանության փաստը։ 1920-ական թթ. թուրքական կառավարությունը վարում էր ցեղասպանությունը մոռացության տալու քաղաքականություն։ Մեծ Եղեռնի 50-ամյակից հետո թուրքերի գործելակերպում նկատվեցին նոր փոփոխություններ։ Եվրոպացի, ամերիկացի գիտնականների մասնակցությամբ տարբեր լեզուներով հրատարակվեցին աշխատություններ, պրոպագանդիստական նպատակներ հետապնդող գրքեր, որոնց մեջ այս անգամ արդեն խոսվում էր հայերի ողբերգության մասին, բայց միաժամանակ հավասարության նշան էր դրվում երկու կողմերի կրած կորուստների միջև. կեղծվում էր Թուրքիայում զոհված հայերի թիվը, ցեղասպանությունը և տարագրությունը բացատրվում էին պատերազմական մոտիվներով, Ռուսաստանի առաջխաղացմամբ և այլն։

Ցեղասպանության խնդիրն ուսումնասիրելիս հաճախ անտեսվում են երկրների միջև հաստատված առևտրատնտեսական և սոցիալական հարաբերությունները, մինչդեռ հենց դրանով էին պայմանավորում ԱՄՆ-ի կոնգրեսում հայկական ցեղասպանության բանաձևի վերաբերյալ վեճերը ընթացիկ տարվա փետրվարին։ Ամերիկյան մի շարք քաղաքական գործիչներ, գործարար շրջանների մարդիկ չցանկացան իրենց տնտեսական շահերի հաշվին վատացնել հարաբերությունները ՆԱՏՕ-ի իրենց դաշնակից պետության հետ։ «Ամերիկյան առևտրի 40 ընկերությունների» կոնգրեսին ուղղված նամակում ասվում էր, օրինակ, որ բանաձևի վավերացումը մեծ վնաս կպատճառի Թուրքիայի հետ ունեցած հարաբերություններին։ Այս և սրա նման ճնշումներն էլ ամերիկյան բարձրագույն մարմնի վրա ի վերջո խաղացին իրենց դերը և բանաձևը չընդունվեց։

Լսվեց նաև Տեսսա Հոֆմանի (Արևմտյան Բեռլին) զեկուցումը «1915—1917 թթ. գերմանական փաստաթղթերը և ականատեսների վկայությունները հայերի ցեղասպանության մասին» թեմայով։

Զեկուցողը մասնավորապես նշեց, որ գերմանական աղբյուրները հսկայական նշանակություն ունեն 1915 թ. Թուրքիայում տեղի ունեցած դեպքերի հետազոտման համար, քանի որ Գերմանիան առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Օսմանյան կայսրության ռազմական ու քաղաքական դաշնակիցն էր։

Զեկուցողը գերմանական վավերագրերը դասակարգում էր հետևյալ կերպ՝ գերմանական պաշտոնական անձանց՝ հիմնականում դիվանագետների կարծիքներ և հաղորդումներ, գերմանացի միսիոներների, բժիշկների, Բաղդադի երկաթուղու շինարարությունում աշխատած ինժեներների հուշագրություններ և զինվորական առաքելությամբ Թուրքիայում եղած սպաների վկայություններ։ Փաստաթղթերի յուրաքանչյուր խմբին ուրույն մոտեցում է պետք։ Հատկապես արժեքավոր են գերմանացի միսիոներ, աստվածաբան Յ. Լեփսիուսի գրառումներն ու հուշագրությունները։ Գերմանիայի արտաքին քաղաքականության մինիստրության արխիվից նրա կազմած ժողովածուն մինչ հիմա եղած գերմանական վկայությունների ամենահարուստ ու բովանդակալից ժողովածուն է։

Վ. Ա. Նադեին-Ռևսկին (Մոսկվա) իր «Հայերի ցեղասպանությունը պանթուրքիստական ուսմունքի լույսի ներքո» թեմայով զեկուցման մեջ մանրամասն կանգ առավ ժամանակակից պանթուրքիզմի վրա։ Հարցերի նույն խումբն էր լուսաբանվում նաև Մ. Հ. Քոչարի և Ռ. Ա. Սաֆրաստյանի «Ցեղասպանության գաղափարի հասունացումը Թուրքիայում (XIX դարի II կես—XX դարի սկիզբ)» և Միհրան Դաբագի (ԳՖՀ) «Պանթուրքիզմի աշխուժացումը երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ» զեկուցումների մեջ։

Յու. Գ. Բարսեղովի (Մոսկվա) «Մտադրությունը որպես ցեղասպանության հանցակազմի սուբյեկտիվ տարր» և Հ. Վ. Հակոբյանի (Երևան) «Ցեղասպանությունը և միջազգային իրավունքը» զեկուցումներում հայկական ցեղասպանությունը դիտվում էր միջազգային իրավունքի տեսանկյունից, քննարկվում էր 1948 թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի ընդունած կոնվենցիան։ Կոնվենցիայի չափանիշներով գնահատվեցին ցեղասպանական ակտերը Սումգայիթում և Բաքվում, որտեղ կատարված դեպքերը լիովին համապատասխանում են կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածների դրույթներին։

Ջաանի Իդրաելի (Իսրայել) «Հայտնի ցեղասպանությունների ժխտման հոգեբանությունը», Ռոջեր Սմիթի (ԱՄՆ) «Ցեղասպանության ժխտումը և արդարացումը (Հայկական Եղեռնի օրինակով)», Հաֆեզ Ֆուաղ Հասանի (Եգիպտոս) «Պատասխանատվություն ցեղասպանության համար» զեկուցումներում բացահայտվեցին ինչպես հայկական, այնպես էլ այլ ցեղասպանությունների ժխտման հոգեբանության պատմական, սոցիալ-տնտեսական և մշակութային արմատները, նախանշվեցին ուղիներ դրա լայն լուսաբանման և դրա դեմ պայքարի համար։

Մի շարք զեկուցումներում ի հայտ էին բերվում նոր աղբյուրներ, որոնք մինչ այժմ դիտական շրջանառության մեջ չէին դրված։ Այդ առումով հիշատակելի են Արտեմ Օհանջանյանի (Ավստրիա) «Ավստրո-Հունգարական կայսերական և թագավորական փաստաթղթերը և Հայկական հարցը», Վ. Միքայելյանի «Հայերի ցեղասպանությունը ըստ գերմանական աղբյուրների (նոր վավերագրեր)», Բուլդուրջյան Նելիդա Ելենայի (Արգենտինա) «Հայկական ցեղասպանությունը 1915—1916 թթ. արգենտինյան մամուլում», Եվտիչ Միրոլյուբի (Հարավսլավիա) «Վիկտոր Բերարը (Ֆրանսիա) հայ ժողովրդի ցեղասպանության մասին», Ա. Ա. Հովակիմյանի «1896 թ. հայերի կոտորածը Կ. Պոլսում ըստ սերբական դիվանագիտական փաստաթղթերի», Վ. Կոճոյոզյան—Հովհաննիսյանի (ԱՄՆ) «Հիշողությունների դերը հայկական ցեղասպանության ուսումնասիրման գործում» զեկուցումները։

Զեկուցողների մի խումբ ուսումնասիրման առարկա էր ընտրել Մեծ Եղեռնի լուսաբանման հարցերը թուրքական (Ֆոսս Կլայվ (ԱՄՆ), Մ. Տ. Բոջոլյան) ֆրանսիական (Ռ. Գ. Սահակյան), արաբական (Ն. Հ. Հովհաննիսյան) պատմագրության գնահատմամբ։

Թուրք-ադրբեջանական հակահայկական գործակցության հարցերը մանրամասն քննվեցին Հ. Ա. Ավետիսյանի («Երիտթուրքերի և մուսավաթի հակահայկական գործակցությունը և կոտորածները 1918 թ.»), Լ. Ա. Խուրշուդյանի («Ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում և Ադրբեջանում որպես Հայկական հարցի լուծման «միջոց»), Վ. Ե. Խոջաբեկյանի («Ցեղասպանությունը արդի Ադրբեջանում։ Ժողովրդագրական պրոցեսներ»), Հ. Ռ. Սիմոնյանի («Քեմալական Թուրքիայի ագրեսիվ քաղաքականությունը և 1921 թ. մարտի 16-ի Մոսկովյան պայմանագիրը») զեկուցումներում։

Ուշադրությամբ լսվեցին նաև Ռոբերտ Մելսոնի (ԱՄՆ) «Հեղափոխություն և ցեղասպանություն, 1915 թ. հայերի ցեղասպանության և բնաջնջման պատճառները», Վ. Տատրյանի (ԱՄՆ) «Թուրք գինվորականների դերը հայերի ցեղասպանության մեջ», Քրիստոֆ Դինկելի (ԳՖՀ) «Գերմանական սպաները Օսմանյան կայսրությունում և հայերի ցեղասպանությունը», Ֆոն Ռենեսե Էռնստ-Ալբրեխտի (ԳՖՀ) «Հայկական հարցը կայսերական Գերմանիայում»,

Լևոն Պողոս Զեքիյանի (Իտալիա) «Հայերի ցեղասպանություն հասկացության մասին» և այլոց զեկուցումները։

Ս. Ն. Սարինյանի («Ցեղասպանության արտացոլումը XIX դարի հայ գրականության մեջ»), Ա. Կ. Եղիազարյանի («Եղեռնի և ազատագրական շարժման արտացոլումը խորհրդահայ գրականության մեջ»), Ա. Գ. Զաքարյանի («Եղեռնը Եղիշե Չարենցի «Դանթեական առասպել» պոեմում») զեկուցումներում բացահայտվեցին նախախորհրդային և խորհրդային հայ գրականության մեջ Մեծ Եղեռնի և հայ ազատագրական շարժման լուսաբանման հետ կապված հարցերը։

Գիտաժողովի մասնակիցները վերջում ընդունեցին հետևյալ կոչը՝ ուղղված ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահ Ա. Ի. Լուկյանովին։

Ապրիլի 17—20-ը Երևանում անցկացվեց «Հայերի ցեղասպանությունը. պատմություն, տեսություն, քաղաքական պատասխանատվություն» միջազգային գիտական խորհրդաժողովը 1915 թվականի ցեղասպանության 75-ամյակի առթիվ։ Խորհրդաժողովին մասնակցում էին 16 երկրների (ԽՍՀՄ, ԱՄՆ, Կանադա, ԳՖՀ, ԳԴՀ, Արևմտյան Բեռլին, Ֆրանսիա, Հարավսլավիա, Արգենտինա, Իսրայել, Ավստրիա, Կիպրոս, Իտալիա, Շվեյցարիա, Եգիպտոս, Սիրիա) գիտնականներ։

Խորհրդաժողովի մասնակիցները օսմանյան Թուրքիայում իրագործված հայերի ցեղասպանությունը դատապարտեցին որպես ոճրագործություն մարդկության դեմ։ Նրանք ցանկություն հայտնեցին, որ ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը քննարկի հայերի ցեղասպանության դատապարտման հարցը, նկատի առնելով, որ միջազգային գիտական հասարակայնության տեսակետից հայերի ցեղասպանության փաստը անհերքելի է և հաստատված է եղած բոլոր փաստաթղթերով։

Գիտնականները տագնապ հայտնեցին այն առթիվ, որ մեր օրերում էլ են փորձեր արվում ազգային պրոբլեմները լուծելու բռնացման միջոցով, դիմելով մարդկանց ոչնչացման էթնիկա-ազգային հողի վրա։ Ուստի ԽՍՀՄ Գերագույն խորհրդի կողմից հայերի ցեղասպանության պաշտոնական դատապարտումը կարող է նպաստել ապագայում որևէ ժողովրդի նկատմամբ ցեղասպանության գործողությունների կանխմանը։

Ձեզ ենք դիմում հաստատակամ խնդրանքով՝ հրապարակայնության քաղաքականության ոգով օժանդակելու ԽՍՀՄ զանգվածային լրատվության կենտրոնական միջոցների կողմից խորհրդաժողովի արդյունքների լուսաբանմանը, որը նվիրված էր հայերի ցեղասպանության ապրիլի 24-ին նշվող 75-ամյակին։

Միջազգային խորհրդաժողովի մասնակիցներ

Գիտաժողովի մասնակիցները ցանկություն հայտնեցին գիտաժողովում լսված զեկուցումները հրատարակել հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով։

Մ. Մ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ